


ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրուած են միայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мелкъ».
կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարուած են
խորաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՂԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ պէտք է անէր յարգման լինելու համար.—
Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսկահայերը և բողո-
քական միսիոնարները. Հայոց թատրոն. Նամակ
թիֆլիս. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Միսիոնար-նախագահ Տիսայի ձառը. Նա-
մակ թիֆլիսայից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԻՆՉ ՊԵՏԻ Ե ԱՆԵՔ ԵԱՐԳՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ
ՀԱՄԱՐ

Հայը համ չէ ուզում հրաժարուիլ իր
խոշոր պահասութիւններէն, — համ ուզում
է յարգման լինել օտարներէն: Հայը համ
չէ ուզում սեփականել իրան այն յատկու-
թիւնները, որոնց սեփականելով կարող է
յուսակ ամենքէն յարգման լինելու, — համ
վրդովում է երբ գտնուի մէկը որ
համարձակութիւն ունի անվախ, աներկիւղ
ցոյց տալ նրան իր խոշոր պահասութիւն-
ները:

Ուրանալ թէ նկարագրուած պահասու-
թիւնները իսկ ազգի մէջ, այդ չէ կարող
անել հայը, այդ նա իր պտուղ խոստո-
ւած է իրան արդարացին: Մէկը հանդէս
է դուրս գալիս բացատրելով և նոյն իսկ
ներելով այդ պահասութիւնները հայի ան-
ցեալ անմիջիկապ պատմական կեանքի ազ-
դեցութեամբ, միւսը իրան հեռատես և
քաղաքագէտ ձևացնելով, դուրս գոռում է
թէ այժմ անտակտ և անժամանակակից
է ցոյց տալ օտարներին մեր ներքին պա-
կասութիւնները.....

Մտնացոյց տես մի ազգի պահասու-
թիւնները վրա, չէ նշանակում հնարել
այդ պահասութիւնները, մի նոր գիւտ
անել, բայց անել օտարներին առջև նրանց
համար մինչև այժմ անյայտ մնացած մի
գաղտնիք.....

Մեր պահասութիւնները առանց մեր ա-
սեղու էլ շատ լաւ յայտնի են օտարներին
և քննադատելով մեր պահասութիւնները
մենք ոչինչ նոր տեսնուածութիւն մեր մասին
չենք աւելացնում օտարներին համար: Ընդ-
հակառակ, եթէ ընդունենք որ օտարները
մեզանով հետաքրքրուած են, նրանք հիմա
միայն իր սկսնի յարգել մեզ երբ մենք ինք-
ներս սկսում ենք մեր պահասութիւնները
մերկացնել, քննադատել, ուրեմն ձգտում
ենք բժշկել մեր բարոյական ախտերից:

Միայն այդ ձանապարհով մի ազգ կա-
րող է բժշկուիլ իր խոշոր պահասութիւննե-
րից, իր անհամարելի յատկութիւններէն և
ոչ թէ ծածկելով իր և ուրիշների աչքից
իր հասարակական զարգացման աննպաստ
յատկութիւնները, իր բարոյական և մտա-
ւոր առաջադիմութեան գործի համար
մշտական խոչնդոտ կազմող արատները.....

«Մշակ» ուղղութեան ամենակատար
հակառակորդների անգամ ոչինչ ապացոյց
չեն կարող բերել մեր խօսքերը հերքելու
համար, չեն կարող, ինչքան էլ ցանկանա-
յին, մեր ասածների հակառակն ապացու-
ցանել, չեն կարող հաստատել քիչ թէ շատ
հիմնական փաստերով թէ հայերի մեծ մա-
սը ընդհակառակն, շատ ազնիւ, բարոյա-
կան և շիտակ ազգ է: Ուրեմն մնում է
միայն այդ տեսակներին խորամուտ և հե-
ռատես քաղաքագէտ ձևանալ, վրդոված և
զայրացած իրանց ցոյց տալ, ազգասէր սրբ-
տից բղրած կեղծաւոր աղաղակներ բարձ-
րացնել թէ «հայերի պահասութիւնները
ցոյց տալ նշանակում է միտսել հայերի ա-
նունը օտարներին աչքում, վայր գցել մեր
յարգը և արօպայի առջև» և այլն:

Մի բան միայն մեզ դարմանում է. «Մը-
շակը» հօ տան և չորս տարի շարունակ
անդադար նոյնն էր անում, խոստովանե-
ւ զանութեամբ քննադատում էր հայե-
րին, նոյն պրօքլամայով հանդէս դուրս
եկաւ և ներկայ տարվայ սկզբում, երբ մեր

լրագիրը ընդմիջուց յետոյ նորոգեց իր
գոյութիւնը: Ուրեմն մեր թշնամիների ա-
կանջները սովոր պիտի լինէին «Մշակի»
կծու, խիստ և պարզախօս լեզուին, ան-
կեղծ, դառն ճշմարտութիւնների արտա-
յայտելուն: Ուրեմն հիմա «ի՞նչ ձանձ է
կծել» մեր հակառակորդներին, որ նրանք
կարծես թէ նոր են նշմարում մեր լրագրի
ինքնաքննական որոշ և խիստ ուղղութիւ-
նը..... Բայց տես թէ «ou la vertu va
se nicher» («որտեղ է բուն դրել առաքի-
նութիւնը»), — մեր հերոսները ազգի պատուի
պաշտպաններ ձևանալով, հանդէս են դուրս
գալիս որպէս ազգի պաշտպաններ, իրանց
հեռատես և խորամուտ ցոյց տալով և այն
երեսի միտքը յայտնելով թէ այժմ հայերի
պահասութիւններ յայտնելը անտակտ և
անժամանակակից է.....

Գեղեցիկ վարմունք, գեղեցիկ բարոյա-
կանութիւն..... Տարիների ընթացքում ամեն
միջոց գործ զենել ազգը և հասարակութիւ-
նը անբարոյականացնելու, — և յանկարծ
հանդէս դուրս գալ որպէս ունակօր արած
ճշմարտութեան, վիրաւորած անմեղու-
թեան, անարգած ազգասիրութեան, օ-
տարների աչքում անարգած պատուի ան-
վան է անձնուէր պաշտպաններ:

Իսկ նոյն ինտելիգենցիան, նոյն մամուլը
որ իր զայրոյթին է ցոյց տալիս այժմ, երբ
«Մշակը» ճշմարտութիւն է ասում իր հայ-
րենակիցների երեսին, նոյն ինտելիգենցիան,
նոյն մամուլը, իրիւնում ենք և կը հաստա-
տենք մեր խօսքերը հաստատ փաստերով,
ամեն ջանք էր գործ զնում տարիների ըն-
թացքում թէ լրագրութեան և թէ հա-
սարակաց կեանքի յարաբերութիւնների մէջ
անբարոյականացնել ազգը և հասա-
րակութիւնը:

Տարիների ընթացքում թէ հասարակա-
կան կեանքի մէջ, թէ տապալական խօսքի
միջոցով, թէ մասնաւոր յարաբերութիւն-
ների միջոցով անբարոյականացնում էին
ազգը, — իսկ հիմա մէկ անգամից, մի քանի
ձառնան փքած Ֆրանսիայի, ուղղում էք
ոչնչացնել ձեր սերմանած և այժմ անձն-
սերմերի պտուղները, ուղղում էք կեղծ կեր-
պով ձեզ զայրացած ձևացնելով ոչնչացնել
այն հետեանքները, որոնց առաջ գալուն
ազգի ամեն դասակարգերի մէջ դուք ինք-
ներեւ տարիների ընթացքում զօրաւոր կեր-
պով նպաստեցիք:

Ազգը ամեն կերպ անբարոյականաց-
նողները, այժմ ազգի պաշտպաններ են
հանդիսանում:

Երբ որ մեզ կաջողի ցոյց տալ թէ մեր
ինտելիգենցիան և մեր մամուլը տարիների
ընթացքում ամեն միջոց էր գործ զնում
իր անձնական շահերի համար ազգը ան-
բարոյականացնելու, — մեր յանցանքը ազգի
երեսին պարզապէս ճշմարտութիւնն ասե-
լու, նրա պահասութիւնները ցոյց տալու,
ոչինչ կերպի համեմատելով այն ծանր
յանցանքի հետ, որ գործում է գործել են
տարիների ընթացքում ազգի պատուը
պաշտպանող ձևացողները, շարունակ և
ամեն միջոցներով անբարոյականացնելով
նոյն ազգը, որի պատուի կեղծաւոր պաշտ-
պանողներ են հանդիսանում նրանք այս
րօպէս:

Ընտանով մենք կը տեսնենք մեր հաշիւ-
ները «НА ПРАВО» այդ անբարոյականաց-
նող ինտելիգենցիայի և այդ մամուլի հետ:
Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԱՀԱՅՔԵՐԸ ԵՒ ԲՈՂԱՆԻԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԱՐ-
ՆԵՐԸ

Սպահանից, օգոստոսի 9-ից, Պետերբուրգի ու-
սաց «Правит. Вѣст.» պաշտօնական լրագրին
գրում են հետեւեալը. «Ամերիկական բողոքական
քարոզիչների պրօպագանդան պարսկահայերի մէջ
որը, մի փոքր ժամանակ առաջ, համարեա ան-

նկատելի էր, համեմատելով կաթոլիկ միսիոնար-
ների Պարսկաստանի մէջ ունեցած գործունեու-
թեան հետ, վերջին ժամանակներս զգալի կերպով
զօրացել է: Օգոստ քաղելով 1883 թ.ին թէհրա-
նում հիմնված ամերիկական դիպլոմատիական
միսիոնարի հովանաւորութիւնից, բողոքականները
ընդարձակեցին իրանց գործունեութեան սահման-
ները, և այժմ Պարսկաստանի մի քանի քաղաք-
ներում արդէն հիմնել են ուսումնարաններ հայ
երեխաների համար, իսկ թէհրանում մինչև ան-
գամ կառուցված է մի բաւական մեծ եկեղեցի:
Պրօպագանդայի գործում իր առանձին եռանդովը
յայտնի է ամերիկացի Բրուսը, որը բնակութիւն
է հաստաթել Սպահանում դեռ սրանից 17 տարի
առաջ, միակ նպատակ ունենալով դարձնել հա-
յերին զէպի բողոքականութիւն: Քաղաքին մօտիկ
և հայերով բնակեցրած Ջուլայի մէջ Բրուսը իր
գնած հողի վրա շինել է մի դպրոց, ուր յաճա-
խում են մինչև 300 (?) տղայ և աղջիկ ոչ մի-
այն հայերից, այլ և մասնաւորապէս հայերից:

Այդ ուսումնարանում ուսուցիչների պաշտօնը
վարում են Հնդկաստանից բերված հայեր, որոնք
ստանում են, տեղական հանգամանքներին նայած,
բաւական մեծ ուսման և որոնք սովորեցնում են
երեխաներին սկզբնական գիտելիքներ, արհեստ-
ներ, նոյնպէս և ֆրանսիական ու անգլիական լե-
զունները: Բացի դրանից, հայերի երեխաները պար-
տաւոր են այցելել ուսումնարանի մօտ շինված
եկեղեցին, որտեղ Բրուսը իր քարոզչութեամբ քիչ
պատրաստում է իր փոքրիկ ունեւորներին
անցնելու զէպի բողոքականութիւն: Ինչ վերա-
բերում է ամերիկացիների չափահաս հայերի մէջ
ունեցած գործունեութեանը, չէ կարելի ասել թէ
շատ յաջող է առաջ գնում: Ներկայումս Ջուլայի
հայ հասարակութեան մէջ կայ քսանից մինչև ե-
րեսուն ընտանիք, որոնք բողոքական են համար-
վում: Բայց այդ ընտանիքներն էլ, ինչպէս երե-
ւում է, բողոքականութեան կողմն են անցել ոչ
թէ իրանց կրօնական համոզմունքների պատճա-
ռով, այլ ուղղակի նիւթական շահերի համար,
դրամական նպատակների համար, որը Բրուսը ա-
ռաւորէին տալիս է իր հետևողներին: Շատ հաւա-
նական է, որ այդ նպատակների վերապաշար
միսիոնար իրանք հայերը կանխավաճառ ամերիկացի-
ներից: Այդպիսով բողոքական պրօպագանդայի
բոլոր ոյժը և ազդեցութիւնը կենտրոնացած է
ուսումնարանի մէջ, որի օգուտը խոստովանում են
բոլոր հայերը, որոնք մասնաւոր գործ են այն բա-
նից, որ իրանց որդիքը միջոց ունեն սովորելու
հայ հասարակութեան մէջ կայ քսանից մինչև ե-
րեսուն ընտանիք, որոնք բողոքական են համար-
վում: Բայց այդ ընտանիքներն էլ, ինչպէս երե-
ւում է, բողոքականութեան կողմն են անցել ոչ
թէ իրանց կրօնական համոզմունքների պատճա-
ռով, այլ ուղղակի նիւթական շահերի համար,
դրամական նպատակների համար, որը Բրուսը ա-
ռաւորէին տալիս է իր հետևողներին: Շատ հաւա-
նական է, որ այդ նպատակների վերապաշար
միսիոնար իրանք հայերը կանխավաճառ ամերիկացի-
ներից: Այդպիսով բողոքական պրօպագանդայի
բոլոր ոյժը և ազդեցութիւնը կենտրոնացած է
ուսումնարանի մէջ, որի օգուտը խոստովանում են
բոլոր հայերը, որոնք մասնաւոր գործ են այն բա-
նից, որ իրանց որդիքը միջոց ունեն սովորելու

հայ հասարակութեան մէջ կայ քսանից մինչև ե-
րեսուն ընտանիք, որոնք բողոքական են համար-
վում: Բայց այդ ընտանիքներն էլ, ինչպէս երե-
ւում է, բողոքականութեան կողմն են անցել ոչ
թէ իրանց կրօնական համոզմունքների պատճա-
ռով, այլ ուղղակի նիւթական շահերի համար,
դրամական նպատակների համար, որը Բրուսը ա-
ռաւորէին տալիս է իր հետևողներին: Շատ հաւա-
նական է, որ այդ նպատակների վերապաշար
միսիոնար իրանք հայերը կանխավաճառ ամերիկացի-
ներից: Այդպիսով բողոքական պրօպագանդայի
բոլոր ոյժը և ազդեցութիւնը կենտրոնացած է
ուսումնարանի մէջ, որի օգուտը խոստովանում են
բոլոր հայերը, որոնք մասնաւոր գործ են այն բա-
նից, որ իրանց որդիքը միջոց ունեն սովորելու
հայ հասարակութեան մէջ կայ քսանից մինչև ե-
րեսուն ընտանիք, որոնք բողոքական են համար-
վում: Բայց այդ ընտանիքներն էլ, ինչպէս երե-
ւում է, բողոքականութեան կողմն են անցել ոչ
թէ իրանց կրօնական համոզմունքների պատճա-
ռով, այլ ուղղակի նիւթական շահերի համար,
դրամական նպատակների համար, որը Բրուսը ա-
ռաւորէին տալիս է իր հետևողներին: Շատ հաւա-
նական է, որ այդ նպատակների վերապաշար
միսիոնար իրանք հայերը կանխավաճառ ամերիկացի-
ներից: Այդպիսով բողոքական պրօպագանդայի
բոլոր ոյժը և ազդեցութիւնը կենտրոնացած է
ուսումնարանի մէջ, որի օգուտը խոստովանում են
բոլոր հայերը, որոնք մասնաւոր գործ են այն բա-
նից, որ իրանց որդիքը միջոց ունեն սովորելու
հայ հասարակութեան մէջ կայ քսանից մինչև ե-
րեսուն ընտանիք, որոնք բողոքական են համար-
վում: Բայց այդ ընտանիքներն էլ, ինչպէս երե-
ւում է, բողոքականութեան կողմն են անցել ոչ
թէ իրանց կրօնական համոզմունքների պատճա-
ռով, այլ ուղղակի նիւթական շահերի համար,
դրամական նպատակների համար, որը Բրուսը ա-
ռաւորէին տալիս է իր հետևողներին: Շատ հաւա-
նական է, որ այդ նպատակների վերապաշար
միսիոնար իրանք հայերը կանխավաճառ ամերիկացի-
ներից: Այդպիսով բողոքական պրօպագանդայի
բոլոր ոյժը և ազդեցութիւնը կենտրոնացած է
ուսումնարանի մէջ, որի օգուտը խոստովանում են
բոլոր հայերը, որոնք մասնաւոր գործ են այն բա-
նից, որ իրանց որդիքը միջոց ունեն սովորելու

նում: Ամենից առաջ, ի հարկէ, արքեպիսկոպոսը
պէտք է հոգայ լաւացնելու դաստաւորութիւնը հա-
յոց դպրոցում, առանց ծախքի խնայողութեան.
առանց դրան Բրուսի դէմ կուեւր նրա ոյժերից
բարձր կը լինի: Ջուլայի հայերի մէջ գտնվում
են նոյնպէս մինչև երեսուն ընտանիք կաթոլիկ-
ներ, պատէր Պասկալի հոգևոր ղեկավարութեան
ներքոյ, որը շատ թշնամաբար է վերաբերվում
զէպի ամերիկական քարոզիչները, և վերջին ժա-
մանակներս սկսել է պարզապէս օգնել Գրիգորիս
սրբազանին բողոքական պրօպագանդային դիմա-
դրելու գործում:

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Վերջապէս, հայոց դրամատիկական ակումբի
դերասանական խմբի ներկայացումները սկսվեցին:
Ամենայն կողմից այնպէս հետաքրքրութեամբ
հարցնում էին թէ՛ երբ, վերջապէս, ներկա-
յացումները պէտք է սկսվեն, որ անպատճառ
սպասվում էր թատրոնը լի տեսնել զոնէ առաջին
ներկայացման: Բայց բոլորովին ընդհակառակ
դուրս եկաւ. դաշինքի տեղերի անկիր քան կէս
մասը բռնված չէին: Գնեք չէին կարող սրա
պատճառը լինել, որովհետեւ պակասեցնել տեղերի
զինել, աւելի քան այժմ պակասեցրած է, — ան-
հարկն է: Բայց թողնեմ այս ու դիմենք
ներկայացման: Տալիս էին ֆրանսերէնից թարգ-
մանած «Լոդովիգո» փոստ: անունով պիեսան:
Ֆրանսիական առաջին հանրապետութեան ժա-
մանակ ապրում են եղել Փարիզում եղել
անձինք Լոդովիգ և Դիւբուա (պ. Ա. Արման):
Առաջինը մի պատուաւոր և հարուստ մարդ
է, իսկ երկրորդը երեսի աւագաւոր Դիւբուա երեք
ուրիշ աւագանների հետ կողոպտում է ու սպա-
նում Փարիզից Լիոն գնացող սուրհանդակին, որ
մտնում է մի բան խոնիր ճանապարհին գտնված
մի պանդոկ: Դիւբուայի բարդից, նա նման է լի-
նում երեսով Լոդովիգին. այդ պատճառով վկա-
ները, իբրեւ եղեւնագործի, ցոյց են տալիս Լո-
դովիգի վրա: Լոդովիգը չը կարողանալով արդա-
րացնել իրան, դատաւարարում է մահաւան:
Դիւբուայը ունենում է մի թողած սիրունի, Ժան-
նա (տ. Սալմիսի Զմէկեան) անունով: Ժաննան
ամեն բան պարզում է դատաստանին, բայց ար-
դէն ուշ. վճիռը կայացրած է լինում և փոխել
նրան չէ կարելի: Ժաննան կարողանում է ցոյց
տալ Դիւբուային Լոդովիգի հօրը, պանդոկա-
պետին (պ. Զմէկեան) և փեսայ Դիւբուային (պ. Ա.
դպեան), որոնք որ և Դիւբուային ձգում են պա-
տուհանից ներքեւ հրապարակել թէ որքան հնա-
րաւոր է մի այդպիսի վերջ, այդ ուրիշ բան է, մի-
այն պիեսան շատ լաւ նիւթ է տալիս: ցոյց տա-
լու դերասաններին իրանց ոյժերը և պէտք է ա-
սած, որ նոքա (դերասանները) օգտուել են դրա-
նից: Ի հարկէ, առաջին տեղ բռնում է պ. Արա-
ման, որ կատարում էր երկու բոլորովին հակա-
ռակ դերեր. յաջողվեց նրան մասնաւոր չորրորդ
պատկերի տեսարանը, երբ նա բացատրութիւն է
ունենում հօր հետ, որին նա կամենում է հաւա-
տացնել, որ ինքը անմեղ է: Մի և նոյն այդ տե-
սարանում պ. Զմէկեան ցոյց տուեց, որ ժամանա-
կը բոլորովին ներգործութիւն չէ ունեցել նրա
տաղանդի վրա: Բաւական տիպարութեան էին պ. պ.
Տէր-Գալութեան և Աւայեան Դիւբուայի օգնական
աւագանների դերերում, միայն նոքա շատ էին
չափազանցում իրանց դերերի առանց այն էլ
կոմիկական կողմերը: Տ. Սալմիսի չէր փչացնում
Ժաննայի դերը: Այս ներկայացման կար և մի
դերասանուհի, օր. Յամիկ, Լոդովիգի աղջկայ
Ժուլիի դերում: Օրիորդը ունի բաւական գեղեցիկ
զէպը և կազմածը, ոչ բարձր, բայց դուրեկան
ձայն, միայն թէ որքան աշոգութիւն կունենայ
նա, այդ այժմանից ասել չիուր է. տեղ-տեղ և
բոլորում էին ընդունակութեան նշաններ: Ան-
փորձութիւնից և խամ լինելով օր. Յամիկ շատ
վախում էր, այնպէս որ պատահում էր, որ նա ի-
րան կորցնում էր, այդ, ի հարկէ, ժամանակով
կանցնի և այն ժամանակ կարելի կը լինի մի ո-

բող դադարաւոր տալ օրինորդի խաղի մասին։
Ներկայացման շատ խանգարեց երկրորդ պատ-
կերում պատահած մի միջնադէպը։ Դիւբօւքի ա-
տրճանակները փչացել էին, այնպէս որ մարդիկ
սպանուեցան և վիրաւորուեցան առանց ատրճա-
նակը պայթելուն։ Պ. Ալեքանան, նեղացած, ձգեց
ձոցա (ատրճանակներ) և ամբողջ ներկայացման և-
րեւում էր, որ այդ նա չէ մոռացել և զրա չնոր-
հիւ նրա խաղը մի փոքր անհարթ էր։

Լաւ կը լինէր, որ հազուադէպ մէջ անսխա-
նիզներ չը թողարկէին Գործողութիւնը պա-
տահում է դերեկտորիայի ժամանակ, բայց Աս-
տուած գիտէ ինչ ժամանակուայ հազուադէպ էին
գերաւանները վրա ինչքան մտաբերում ենք
թատրոնական դարձերօգում դերեկտորիայի միջոցի
հազուադէպ կան։ Մէկ էլ ինչ կարիք կայ կա-
թօլիկ քահանային միջոցով և բեխերով զարդա-
րել, քանի որ ամենքին յայտնի է, որ կաթօլիկ
քահանայները այդ զարդերը չունեն։ Բեթիսօրը
այդ բանի վրա պէտք է ուշադրութիւն դարձնի։
Դերաւանների մեծամասնութիւնը իրանց դերերը
չը գիտէին։ Այս վերջինն արդէն խրոնիական
հիւանդութիւն է դարձել հայ բեմի վրա։

Nemo

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՅԻՆ

Բազու, 20 սեպտեմբերի

Անգղիոյ աղմուկ բարձրացրեց Բազուի ընթեր-
ցող հասարակութեան մէջ «Մշակի» № 95 «Բա-
րայական կրթութեան» գլուխ ազգերը» վերա-
տեսութեամբ առաջնորդող Դատերը յայտնում են
իրանց անբաւականութիւնը, շատերը իրաւունք
չեն տալիս խաղաղին այդքան էլ պարզապէս լի-
նելու։

Աւելի շատ են և համակրողները, և «Մշակի»
հետ համակարծիքները։ Այդ էլ քննական է։ Խոսե-
ծարարութիւնը բոլորովին էլ ոտնակոխ անել չէ
կարելի։

Փոխանակ աղմուկ հանելը, ծակ ու ծուկ տե-
ղերում գոռում գոչում անելը, մենք այդ պարոն-
ներին խորհուրդ կը տալինք, հէնց իրանց իսկ
մտածել, փնտել... փաստերը հետո չեն։ Այդ
գոռում գոչումները ստիպելին ինձ կրկնել յո-
ղաւածի ընթերցումը, և ահաւասիկ իմ դուրս բե-
րած եղբայրացիներն։

Եթէ «Մշակը» մեր հասարակութեան զանազան
ձեւերն է վերցնում և նրանց պակասութիւնները
մարակում, այդ պարոնները ասում են, բերաննե-
րի թուրը կուտարով։ Ընկալ, ամա ինչ լաւ չի-
նել է զոչադը։ Իսկ մի և նոյն «Մշակը» երբ իր
շատ ժամանակ անսխալ էր մի հաւաքելով հա-
մարեա թէ կրկնում է,—այդ նրանց համար նոր
բան է երևում, այդ նրանց համար խիստ ծանր
է լինում։

Ո՛ր հային չէ պատահել լսել, հէնց նոյն իսկ
հայի բերանից այդ դառն յանդիմանութիւնը թէ-
«անիւ հայ էք», կամ թէ «ալիւ հայ չէք»։ Այդ
խոսքն օր կը լսէք հայի բերանից։ Բայց մի և
նոյնը արդեօք կը լսէք գերմանացու, ռուսի, ֆրան-
սիացու, իտալացու, թէկուզ թուրքի բերանից։
Խոստովանեցէ որ երբեք Բայց այդ միջոց հայի
ինքնիրան ուսումնասիրածը և այդ դառն եղբա-
րացիութեան հասածը չէ։

Տասն և չորս տարի «Մշակի» առաջնորդոնե-
րը կարգացող միայն կիմանայ թէ ինչ դառն,
գառն ճշմարտութիւններ է ասել Գրիգոր Արծրու-
նի հայոց հասարակութեան երեսին։

«Բարոյական կրթութիւնի» գլուխ ազգերը» յո-
ղաւածին չը համակրողները, ինչպէս առհասարակ
իրանց յատուկ է, զանազան պոնիւր են կացնում
այդ յոյժաւածին և գտնում են, որ շատ կծու և
շատ յարձակողական է ընդհակառակը, մեր կար-
ծիքով, այդ գեղեցիկ յոյժաւածը արտայայտում է
սրտացաւութիւն։ Նրա մէջ եղած խօսքերը պա-
րոնները իրանց են յատկացնում և կրկնում, որ
«ամեն ազգի մէջ կան ազնիւ և անազնիւ մար-
դիկ» և այլն։ Մենք հաւատարմեցած ենք և շատ ան-
գամ իսկ վկայած, որ «Մշակը» այդ դառն ճշ-
մարտութիւնները ասելով, չէ ուրանում և հայերի
գովելի կողմերը, նրա ընտիր յատկութիւնները,
քննական ձիւղերը, որոնց մասին նա շատ անգամ
գրել է։ Բայց եթէ նա այդ չէ կրկնում, այդ այն
պատճառով է, որ նա չէ ուղղում անդադար գովել
ու գովաբանել, և ոչ երբեք հասարակութեան
գլխատակին բարձր ենք, կամ գովաբանելով նրա
աչքերը կուրացնել։

Սրա համար, այսինքն մի գլուխ գովելու հա-
մար, փառք Աստուծո՛ւ մենք ունենք ուրիշ լրագիր-

ներ, որոնք առանց մեր ասելու էլ իրանց պարտը
լաւ գիտեն...
Թող շարունակեն...

Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են ԲԱԳՈՒՆԻՑ հետեւալը։ «Պէտք է
զարմանալ որ մեզանում գտնվում են մարդիկ,
որոնք կարծես պահանջ ունեն ամեն բան ան-
պայման գովելու, ինչպէս և գտնվում են մեզա-
նում մարդիկ, որոնք մի բանի վրա խօսելով,
անմիջապէս ամեն բան անպայման պախարա-
կում են։ Անկողմնապահ կրկնակա, խղճատաւոր
ըննդատուութիւն մեզանում հազուադէպ բան է։
Այդպէս, օրինակ, գտնվեցան մարդիկ, որոնք
սկսեցին Բազուից «Մշակին» նամակներ գրել
մինչև երկինքը բարձրացնելով Պ. Սարգսեանի
թատրոնական խումբը և այդ խմբի ներկայա-
ցումները, այն ինչ այդ խմբի ներկայացումները
ամենին այնպէս աջողակ չեն, ինչպէս ուսանող
ջանում են նկարագրել։ Խումբը մեծ թերութիւն-
ներ ունի, ներկայացումները մեծ մասամբ անա-
ջող են լինում և ժողովուրդը բաւական սառնու-
թեամբ է վերաբերվում դէպի այդ ներկայացում-
ները։ Եւ եթէ գտնվեցան անձինք, որոնք պ.
Սարգսեանին պակ ընծայեցին, դրանք ամենե-
ւին չեն կարող հասարակութեան մեծամասնու-
թեան զգացմունքի արտայայտողներ համար-
վել։»

ԲԱԳՈՒՆԻ մեր թղթակիցը գրում է մեզ որ այս
տարի «Մարդասիրական» ընկերութիւնը վճռել է
իր գրադարանի համար 1.000 ռուբլու գումարի
նոր գրքեր բերել տալ։ Այդ գումարից 550 ռուբ-
լու ռուսերէն գրքեր պէտք է առնվին և 250
ռուբլու հայերէն գրքեր։ Միացածը այլ ծախսերի
համար։ Դա շատ ուրախակի երևոյթ է։

Անպտեմբերի 20-ից մեր թղթակիցը ՆՈՐ-ԲԱ-
ՅԱՋԵՏԻՑ գրում է մեզ «Մի շաբաթ սրանից ա-
ռաջ Գեղամայ ծովի արևելեան ափում գտնված
գիւղերում բռնակը են և բերվել քաղաքիս բանտը
երեք հոգի առաջակներ, քրոնցից մէկը խոստո-
վանվել է իր արած մի քանի առաջակութիւննե-
րը։ Սրանց բռնողները մայկաններն են եղել,
որոնք այդ տեսակ գործերում շատ քաջ են։
Թուրքերի մեծ մասը ընդհակառակ կարծիս ա-
ռաջակներն են պահանջում, իսկ հայերը վախ-
կոտ լինելով, բոլոր չըջակալ բնակիչներից ա-
մենից շատ են ենթարկվում առաջակութիւն-
ներին։»

Մենք արդէն հաղորդել ենք մեր լրագրի ան-
ցեալ համարում որ անպտեմբերի վերջերում Նոր-
Բայազէտի կողմերում սկսեց ձիւն դալ։ Այդ ա-
ռիւթով մեր թղթակիցը հետեւեալ դատողութիւն-
ներ է անում։ «Խեղճ հողագործը, տեսնելով որ
դաշտերը 5—6 վերջօկի բարձրութեամբ ձիւնով
ծածկվեցան և նա այլ եւ չէ կարողանում կա-
սել իր հացը, վերին յուսահատութեան մէջ է
ընկել։ Երբ, ուրեմն, պիտի կարողանայ կախել
հացը, մտածում է նա, քանի որ այժմանից ար-
դէն ձիւն է դալիս։ Գոնէ այժմ մեր քաղաքացի-
ները հասկանալին կաշեւու մեքենայի կարևորու-
թիւնը, կամ գոնէ քաղաքի վարիչները հասկանա-
լին որ փոխանակ ուրիշ ծախսեր անելու քաղա-
քի գանձարանից, մի երկու հազար ռուբլի ծախ-
սելին կախելու մեքենայ բերելու համար, որպէս
զի հողագործներին դրանով օգնութեան
ձեռք մեկնէին և խեղճ հողագործները այդ տե-
սակ դէպքերում անձար և յուսահատված չը մը-
նային։»

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Երևանը զուրկ է
զանազան հասարակական այնպիսի հիմնարկու-
թիւններից, որոնք կարող են ամեն կերպ օգնել
հասարակութեանը թէ բարոյապէս, թէ նիւթա-
պէս։ Երևանը չունի ոչ հիւանդանոց հասարակ—
աղքատ դասակարգի համար, որի բացման հա-
մար բժ. Տիգրանեանց այստեղ եղած ժամանակը
աշխատում էր, բայց որովհետև փող էր դուրս
գալիս ժողովրդից, դուրս համար մերձեց, նամա-
նաւանդ հարուստները միշտ անուշադիր են թող-
նում։ Երևանը զուրկ է նոյնպէս աղքատանոցից,
հարկւարուր աղքատների, որոնք անընդունակ են
աշխատելու, դռնէ դուռ, խանութէ խանութ
ընկած թափառում են, մուրում են, զուրկ ամեն
տեսակ օգնութիւնից։ Երևանը չունի նոյնպէս

առևտրական բանկ, որի պակասութիւնը սաստիկ
զգալի է մեր վաճառականների համար։ Բայց ա-
մենազիջաւոր կարիքներից մէկը, որը այժմ սաս-
տիկ զգալի է հասարակութեան մէջ, այդ հասա-
րակաց գրադարանի չը լինեն է։ Երևանը մինչև
այժմ չունի և չէ էլ ունեցել հասարակական ըն-
թերցարան, որից կարողանաւ անուղ առնել ըն-
թերցող հասարակութիւնը։ Ամեն կողմից լսելի են
արտունջներ, որ չը կայ կարգաւոր գրքեր։ Միայն
խնտիլգետ դասակարգը օգտվում է տեղիս կլու-
րի գրադարանից, նրա գրքերն էլ բոլորը ռուսե-
րէն են, չը կան հայերէն գրքեր։ Միջին դասա-
կարգը դարձեալ չէ կարողանում օգտվել կլուրի
գրադարանից։ Սակայն միջին դասակարգն է կաղ-
մում հասարակութեան մեծ մասը։ Դպրոցների
գրադարանները հազիւ են բաւականութիւն տա-
լիս իրանց աշակերտներին։ Ուրեմն միջին դասա-
կարգը, որոնց մէջ ընթերցանութեան ահլը նոր
է մուտք գործել և անհրաժեշտ է վառ պահել
այդ սէրը, ընթերցանութիւնը—հասարակաց գրա-
դարանից զուրկ է մնում մինչև այսօր։ Ո՛վ պէտք
է հոգայ այդ բանը։»

ՂԱՐԱՑ-ՂԱՆԱՑ գիւղից մեզ գրում են. «Այս
գիւղը գտնվում է Ղարսի հարաւարեւմտեան կող-
մում, 15 վերստ հեռավորութեան վրա Բնակիչ-
ները 1882 թվին Ալեքսանդրապոլից գաղթող մի-
չև յիսուն տուն հայ-բողոքականներ են։ Դրանց
մէջ կայ և տաս տուն, որոնք ուրիշ աղանդի են
պատկանում, այն է պրիգոններն։»

ԲՈՒԹԱՅԻՆԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքի
հայերը մայրենի լեզուով խօսել չեն կարողանում
մեծ մասամբ, և շատերը աւելորդ էլ են համա-
րում իմանալ հայոց լեզուն։ Խօսակցութեան լե-
զուն վրացերէնն է։ Նոր սերունդին մայրենի լեզուն
սովորեցնելու գլխաւոր յոյսը դրած է այստեղի
հայոց ուսումնարանի վրա, և այդ նպատակին
ծառայելու պէտք է լինի այնտեղի մեր երկսեռ
դպրոցների հոգատարութեան գլխաւոր նիւթը։»

Մարաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ
չուտով գործածութեան մէջ կը մտցնվեն նոր
տեսակի և քաշի ոսկի և արծաթի փողեր։ Ոսկի
փողերը կը լինեն առաջուայ նման տաս-րուբլիա-
նոց և հինգ-րուբլիանոց։ Ոսկի դրամի 900 մասը
կը լինի զուտ ոսկի, իսկ 100 մասը պղինձ։ Ար-
ծաթի փողերը կը լինեն ռուբլիանոց, յիսուն կօ-
պէկանոց և քսան և հինգ կօպէկանոց։ Արծաթի
դրամի 900 մասը կը լինի զուտ արծաթ, իսկ
100 մասը պղինձ։

ԿԱՐՍԻՑ մի նախկին ուսուցիչ խնդրում է մեզ
տպել հետեւեալը։ «Վեց տարի անընդհատաբար
ամենայն բարեխղճութեամբ վարած լինելով ու-
սուցչական պաշտօն կարսի հայոց երկսեռ ու-
սումնարանների բարձր դասարաններում, այսօր
անպաշտօն մնացի, քանի որ տեղին դպրոցների
նորահաստատ հոգաբարձութիւնը, չը գիտնէ ինչ
պատճառով, այլ ևս չուզեց ինձ ընդունել ուսուց-
չի պաշտօնում։ Այժմ «Մշակի» միջոցով, որ յայտ-
նել է իր պատրաստութիւնը անվարձ տպագրել
իր էջերում ուսուցիչների յայտարարութիւնները,
գիտում եմ մեր թէ թեմական և թէ ծխական
դպրոցների հոգաբարձութիւններին, առաջարկե-
լով նրանց իմ ծառայութիւններս բարձր դասա-
րանների մէջ հայոց լեզուն և հայոց պատմու-
թիւնն աւանդելու համար, Հասցէիս մասին կա-
րող են դիմել «Մշակի» խմբագրութեանը, իսկ
իմ անձին մասին ստույգ տեղեկութիւններ
ստանալու համար ցանկացողները կարող են գի-
մել կարս՝ սրբազան առաջնորդ Աղուանեանին,
բժիշկ Ալեքսանդր Ղազարեանին, բժիշկ Ալեքսան-
դր Տէր-Յարութիւնեանին և պ. Գրիգոր Երզն-
կեանցիին։»

Մեզ հաղորդում են ՂՈՒԲԱՅԻՑ որ այդ քա-
ղաքի հայոց ծխական հոգեւոր դպրոցում ուսումը
սկսվեցան սեպտեմբերի 15-ին։ Թէև ուսումը այդ-
քան ուշ է սկսվել, բայց թղթակիցն ասում է որ
միւս կողմից ուրախակի է որ դպրոցը ընտիր ու-
սուցիչներ մի խումբ ունի և դպրոցի հոգաբար-
ձուներն էլ մեծ եռանդ են ցոյց տալիս դպրոցը
կաւաւարելու գործում։

Մեր բաժանորդներից մի քանիսն, իրանց
բաժանորդագրի ապաւելները մեզ ուղարկելով,
աւելացնում են իրանց նամակները տակ թէ՛
խնդրում ենք փողի ստացման մասին միամտաց-

րէք մեզ կամ մասնաւոր նամակով, կամ լրագրի
պատասխաններում, յայտնելով թէ փողը ստացել
էք։ Զաւում ենք որ ոչ մէկը, ոչ միւսը, չենք
կարող կատարել. մենք ժամանակ չունենք այդ-
քան մասնաւոր նամակներ գրելու, նոյնպէս չենք
կարող «Մշակի» պատասխանների բաժինը լցնել
միմիայն այդ տեսակ պատասխաններով. Ըստա-
ցանք 3 ռուբլի, ստացանք 10 ռուբլի և այլն։
Այդ տեսակ անհարին պահանջներ անող պա-
րոններին մենք ստիպված ենք պատասխանել հե-
տեւալը. մենք, հօ, հաւատում ենք ձեզ, երբ ամ-
բողջ տարի լրագիրը ձեզ ուղարկում ենք, ձեզա-
նից մի կօպէկ փող ստացած չը լինելով, ուրեմն
ինչի դուք ձեռ կողմից մեզ չէք հաւատում, երբ
փոխանակ յուշվար ամսի, միայն սեպտեմբեր
ամսին էք ուղարկում բաժանորդագիրն և այն էլ
շատ անգամ ոչ ամբողջը։

Ամսիս 2-ին, հինգշաբթի օր, տեղի ունեցաւ
կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան
Այգեգործական դպրոցի նոր շինութեան օրհնելու
հանդէսը։ Ներկայ էին իշխան կառավարչապետը,
պաշտօնական անձինք, Գիւղատնտեսական ընկե-
րութեան անդամները և հիւրեր։ Գոհացողական
մաղթանք կատարելուց յետոյ տեղի ունեցաւ շի-
նութեան օրհնելու ծիսակատարութիւնը։ Այգե-
գործական դպրոցի պ. հոգաբարձուն կարողաց
դպրոցի ուսումնական և տնտեսական հաշիւը
Այդ հաշիւը երևում է որ ուսումնարանի նիւթա-
կան մասը աննախանձիւ է։ Աշակերտների թիւը
32 է, դրանցից տասն և երկուսը հայեր են։
Դպրոցը պէտք է ունենայ երկու պատրաստակա-
ն և երեք հիմնական դասատուներ։ Առ այժմ բաց-
ված են պատրաստականները և մի դասարան։
Դասատուութիւնը կը լինի ռուսաց լեզուով։ Կը
հրաւիրվի և մի հայ քահանայ իբրեւ կրօնաւոյց։
Դպրոցի նոր շինութիւնը բաւական գեղեցկա-
տեսիւ է, բայց, տարաբաղաճաբ իբրեւ ուսումնա-
րան ունի մի քանի պակասութիւններ, սենեակնե-
րի փոքրութեան և անյարմար դասատուութեան
պատճառով։ Դպրոցի ծրագրի մէջ գիւղատնտե-
սական գործնական պարապմունքներին մեծ տեղ
է տուած, որի համար առանձին յարմարութիւն
է ներկայացնում այն մեծ այգին, որի մէջ և գե-
տեղված է դպրոցը։ Այգեգործական մասնագի-
տական դպրոցը սկզբից մեծ ընդունելութիւն է
գտնում, որին ապացոյց կարող է լինել ցանկա-
ցողների այն մեծ թիւը, որոնք կամենում են մըտ-
նել այդ ուսումնարանը, և որոնցից շատերին
վարչութիւնը մերժել է, տեղի ջուրութեան պատճա-
ռով։ Այդ բանը ընկերութիւնը վաղուց պէտք է
աչքի առաջ ունենար, և այդ պատճառով ցան-
կալի է, որ ընկերութիւնը ամեն միջոց ձեռք առ-
նի գէթ զալ տարի այդ ուսումնարանը աւելի
մեծացնելու համար։

Երկուշաբթի, սեպտեմբերի 29-ին, կայացաւ քա-
ղաքային դումայի նիստը։ Կարգադրեցաւ ան-
ցեալ նիստի օրագրութիւնը, որից ի միջի պլոց,
երևեցաւ որ ընտրողական ցուցակները քննելու
ժամանակ դուման ի նկատի չառնելով ձայնաւոր
պ. Զիւլուփի բողոքը, չը մտցնէր նրա անունը
ցուցակների մէջ, բայց մտցրեց ցուցակների մէջ
ձայնաւոր պ. Մելիք-Բեգլարեանցին, Դահլուզա-
ղեանցին, Սումբատովին։ Հերթական հարցերից քնն-
նվեցան միայն երկուսը, Ա) Վարչութիւնը խնդրում
է դումայից բաց անել 800 ռուբլու լրացուցիչ գու-
մար, ընտանեկան ցուցակների կազմութեան հա-
մար։ Պ. Մ. Թամաշեանը ուշադրութիւն է դարձ-
նում այդպիսի լրացուցից դումարներ խնդրելու
անյարմարութեան վրա, ընտանեկան ցուցակները
կազմվում էին յուլիսին, օգոստոսին,—դեռ դը-
րանից առաջ կարելի էր նախատեսել այդ
ծախսը, ինչու այն ժամանակը չը պահանջեցին
Պ. քաղաքագլուխը բացատրում է որ այդ մի և
նոյն է, պէտք է այդ գումարը տրուէր Դուման
վճռեց այդ գումարը տալ։ Բ) քաղաքային դու-
մայի հրատարակութեան մէջ տպված են յունվա-
րի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը 1886 թուականի
քաղաքի ելևմտի հաշիւը։ Քաղաքագլուխը հարց
նում է ձայնաւորներից թէ ինչ ունեն նրանք ա-
սելու այդ հաշիւ մասին։ Բայց... ձայնաւորնե-
րից գրեթէ ոչ ոք այդ հաշիւը կարդացած չէր,
ուրեմն նրա մասին ասել ոչինչ չէր էլ կարելի։
Գ) Ձայնաւոր պ. Մ. Թամաշեանը անցեալ նըու-
տերից մէկում հարց էր առաջարկել վարչութեան
թէ ինչ գումար է մէջ է գտնվում քաղաքի ընդ-
հանուր նոր գնահատութեան հարցը։ Վարչութիւնը
այդ պատասխանեց, 1884 թուականի ապրի-

լին, դուռնան վնասել էր քաղաքի կառուածները նորից գնահատել և մի և նոյն ժամանակ էլ ընտրել էր կենտրոնական և տեղական յանձնաժողովները գործը գլուխ բերելու Գնահատութիւնը պէտք է կատարվէր մի տարի ժամանակամիջոցում—մինչև 1885 թվականի մայիսը: Յանձնաժողովները անդամներին ռոճիկ և ալ ծախսերի համար սահմանված էր 18 հազար ռուբլի 1885 թ. մայիսին գնահատված էին միայն 4500 կաւածք և մնում էր մօտ 6700: Վարչութիւնը ստիպողական միջոցներ էր գործ գնում շտապեցնելու յանձնաժողովներին վերջացնել գործը, և մինչև անգամ չէր վճարում, մինչև գնահատութեան վերջնալը, յանձնաժողովի անդամներին ռոճիկը: Եւ վերջի վերջոյ 21/2 տարուց յետոյ, այս օրերս կենտրոնական յանձնաժողովը ներկայացրեց գնահատութեան ցուցակները: Վարչութիւնը ինքը պէտք է կարգաւորէ այդ ցուցակները, հոկտեմբերին կառավարիչ դուռնային ի հաստատութիւն և յունվարի 1-ից 1887 թվականի երեկ քաղաքային հարկերը կը վերցվեն համեմատ նոր գնահատութեան: Սկզբում սահմանած 18 հազարի տեղ ծախված է 27 հազար ռուբլի (որոնցից 25 հազարը յանձնաժողովների անդամներին ռոճիկ): Բացի դրանից չէ վճարած մօտ 2 հազար ռուբլի: Կենտրոնական յանձնաժողովի անդամ իշխ. Թումանով բացատրում է որ յանձնաժողովի մեղք չէ որ գործը այդքան ուշացաւ: Ժամանակամիջոցը նշանակելու միջոցին աչքի առաջ է եղել Մոսկվայի գնահատութիւնը և համապատասխան դրան նշանակելը, բայց այդ սխալ պրինցիպ էր, քանի որ հանգամանքները այստեղ դանազանվում են Մոսկվայից, ուր շատ ձեռնուռ պայմաններ կային գործը շուտ վերջացնելու: Գետաքայն քաղաքային արժողութիւնը համեմատ է 34 միլիոն ռուբլու, 20% աւելի 1874-ի գնահատութիւնից: Վարչութեան զեկուցումը և իշխ. Թումանովի բացատրութիւնները երկար և տաք վիճարանութիւններ յարուցին, բայց դուռնային որոշ եղբայրացութեան չեկաւ. որովհետեւ ձայնաւորները սկսեցին կամաց-կամաց ցրուել և պ. քաղաքագլուխը ժամի 10 1/2-ին ստիպված էր նիստը փակել, որովհետեւ օրէնքով պահանջած թիւով ձայնաւորներ չը կային նիստը օրինակոր համարելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՆԻՍՏԵՐ-ՆԱԽԱԳԱՀ ՏԻՍԱՍԹԻ ԶԱՌԸ

Հեռագիրը մեղ լուր բերեց այն ճառի մասին, որով Ունգարիայի մինիստր-նախագահ Տիսսա բացատրութիւններ տուեց պատգամաւորներին ժողովին Բալկանեան և բոլորական հարցերի մասին: Թորվաթի և Իրանի արած հարցմունքների պատճառով Այդ ճառը մեջք պարունակած մտքերով, և այնքան որոշ է իր մէջ պարունակած մտքերով, հակառակ քաղաքական սովորական բացատրութիւնների, որ մենք հարկաւոր ենք համարում ծանօթացնել հայ ընթերցողներին այդ ճառի գլխաւոր կէտերի հետ...: Էյն հերքում եմ այն բոլոր ենթադրութիւնները, ասեց Տիսսա, որ իբրև թէ մեր արտաքին գործերի մինիստրութիւնը ՚ի նկատի ունէր իշխան Ալեքսանդրի դաշնկեց անելը, կամ իբրև թէ վաղորդ տեղեկութիւններ ունէր այն բոլոր չարագործութիւնների մասին, որոնք եղան ընդդէմ իշխան Ալեքսանդրի, և որ իբր թէ մեր մինիստրութիւնը հաւանութիւն է տուել այդ բոլորին: Արտաքին գործերի մինիստրութիւնը չէր կարող իմանալ այդ բոլորը: Մեր կառավարութեան և Ռուսաստանի մէջ գոյութիւն չունի ոչինչ համաձայնութիւն որոշելու արևելեան կամ արևմտեան Բալկանի տիրապետող ազդեցութիւններին, ուստի և այդ ազդեցութիւնը չէր կարող չըջապատված լինել զանազան պայմաններով...: Աւստրո-Ունգարիայի դրութիւնը, հէնց նոյն իսկ Բերլինի դաշնագրի հիման վրա, համապատասխան է մեր կենսական շահերին, և միանգամայն գոհացուցիչ է, մինչդեռ այդ դաշնագրի գործութիւնը անխախտ է պահպանում...: Իշխան Ալեքսանդրի անձի դէմ փորձ անող չարագործների վերաբերմամբ, մեր մինիստրութիւնը խորհուրդ է տուել ուժ հարկել և յառապ կերպով վճիռ չը կայացնել հէնց նոյն իսկ յօդուք Բոլորականի, մենք ոչինչ չենք ուզեցել անել և չենք էլ արել յօդուք գաւաղիներին...: Դեռ 1868 թվին, երբ ես առաջին անգամ հրապարակաւ խօսեցի Արևելեան խնդրի մասին, ի նկատի ունենալով

ներգործող հանգամանքները, ես ասեցի, որ եթէ որ և իցէ փոփոխութիւններ պիտի լինեն Բալկանեան թերակղզու վրա, մեր շահերը պահանջում են, որ այդ թերակղզու վրա ապրող ժողովուրդները կազմեն անկախ պետութիւններ, այնպիսի պետութիւններ, որոնք համապատասխան լինէին այդ ցեղերից իւրաքանչիւրի անհատական յատկութիւններին: Ներկայումս այդ պրօգրամ ման աւելի լաւ կարող է բաւարարութիւն տալ Աւստրո-Ունգարիայի շահերին: Մի կողմ թողնելով նոր երկիրներ գրաւելու ցանկութիւնները, մեր պետութիւնը իր բոլոր ոյժով և ազդեցութեամբ պէտք է ձգտի նպաստելու բաւկանեան պետութիւնների կազմակերպութեան շտապեցնելուն, և արգելելու օտար մի որ և իցէ պետութեան հովանաւորութեան կամ ազդեցութեան հաստատելուն կամ մեծանալուն...: Օտար պետութիւնների հետ ունեցած մեր դաշնակցական յարաբերութիւնների մէջ փոփոխութիւններ չեն եղել...: Գերմանիայի հետ մենք մնում ենք նախկին դրութեան մէջ...: Մենք մեր կողմից ընդունում ենք որ Բերլինի դաշնագրը լիակատար գոյութիւն ունի, թէև նրա մի քանի մասերը խախտվեցան...: Անկախ չենք նա անաստիկ կերպով խախտվեցաւ անցեալ տարի Արևելեան-Ռումէլիայում...: Բայց և այնպէս մենք անհրաժեշտ ենք համարում պահպանել Բերլինի դաշնագիրը, և ոչ մի պետութիւն մեր այդ հայեցակէտի հակառակ ցանկութիւն չէ յայտնել...: Կառավարութիւնը էլի նոյն կարծիքի է, որ գոյութիւն ունեցող հիմունքների վրա, այս դէպքում, երբ թիւերը իրան չի օգտվի իրան տուած իրաւունքները, ոչ մի ուրիշ պետութիւն իրաւունք չունի նրա առաւ ձին կերպով դիմաւորված խառնվել կամ հաստատել իր հովանաւորութիւնը Բալկանեան թերակղզու վրա, և չէ կարող տեղի ունենալ մի որ և իցէ փոփոխութիւն Բալկանեան պետութիւնների կազմակերպութեան կամ յարաբերութիւնների մէջ, առանց Բերլինի դաշնագրի ստորագրող պետութիւնների փոխադարձ համաձայնութեան...: Այդ է, ընդհանուր կերպով, մեր գործողութիւնների պրօգրամման...: Մենք յոյս ունենք յաջող հետևանքի հասնել, առանց խաղաղութիւնը խախտելու...: Նպատակն էր ձգտել չափաւորութեամբ, բայց կատարեալ լրջութեամբ և վճռողականութեամբ...:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐ-ԲԻՍԵՏ

Կ. Պոլիս, 24 սեպտեմբերի

Աստուծոյ էր թէ լուսեմը լոյս չէր հիտեր. այլ մինչ մեր աչքերն յափուռն Վստիորի կորոնէին գնալով գալուստն էր խորհրդապատ մի պատահար—ինչպէս ուղեցին կարծել—և անա իրգրումի հովիւները երջանիկ են քան զմեզ, կրնան նշել «հասաւ նոր վստիորութիւն ի յերգումը քաղաքին»...: Արդարև «Արևելք»-ի փառաւոր թղթակցութիւն մը կը ծանուցանէ այսօր, թէ «Վստիոր»-ը իրանց էֆէնդի ամսոյ 5-ին հասած է ի Կարին ուր գտած է փառաւոր ընդունելութիւն. անա նկարագրելով:

«Անցեալ ուրբաթ երեկոյ ուշ տուն քաղաք հասաւ Վստի. Կարապետ Յ. Եղեանց, որ Վստի. Գ. Մ. Սանասարեան բարերարին կողմանէ կուգայ Սանասարեան վարժարանի վիճակը գննելու: Թէպէտ և բարեբաղը խոստացած էր անձամբ գալ, սակայն իւր գործերը չեն ներած նմին իւր բաղձանքը կատարել: Պ. Կ. Եղեանց ազգին մէջ երեկոյ անձնաւորութիւն է, և կրթակի օր բոլոր ազգային գլխաւորը և ժողովականը զիմեցին ի վարժարան, ուր իջած էր, նորա բարի գալուստը ողջունելու: Պ. Կ. Եղեանց փախաբան լինելով յանձնաժողով գալ վարժարանի ճեպարկութիւնը կանխաւ չէր հրատարակած ուղևորելու լուրը: Երեքշաբթի օր ալ Վստի. Պ. Եղեանց Գեր. Օրմանեան Սրբազանի ընկերակցութեամբ այցելութիւն տուաւ կառավարութեան պաշտօնէից և պատուաւոր ու սիրալի ընդունելութիւն ունեցաւ Վստի. Կ. Եղեանցին, Վստի. Հրամանատարին, Մեծ. ընդհանուր քարտուղարին և Մեծ. կրթական տեսչին կողմանէ:

«Սանասարեան վարժարանի տեսչութիւնն այս տարի պարտաւորուած է հանդիսաւոր հարցաքննութիւնները գնել թէպէտ և ազգայնաց կողմանէ և կառավարական պաշտօնէից կողմանէ խնդիրներ եղան: Քաղաքին մէջ տղայաց հիւանդութիւններ կը տիրեն, յորոց բոլորովին խորհրդով չուզեր առիթ տալ խառն ժողովուրդեան

ի վարժարան զիմեցու: Նոր աշակերտներ հետգնաւ կը հասնեն զանազան քաղաքներէ և թիւը քառասունի կը մերձենայ»:

Պ. Եղեանցի Պոլիս դալն ու մեկնիլը բաւական խօսակցութեանց առարկայ եղաւ. պատմեցին թէ Պատրիարքը գաղտնի տեսակցութեան գացեր է, և այն և այլն: Ալ կրնանք կարծել թէ Պատրիարքը երևակայութիւնը որպէս թախաւ: Չը պատմենք, երկար կը լինի Մենք կը կարծենք թէ պ. Եղեան միայն մէկ «միտա» ունէր, Օրդալի շոգնաւուն եղնէ և յաջորդ օրը Տրապիզոնի շոգնաւուն նստիլ.—եթէ երեք եկած ալ լինի Պոլիս, զոր ստույգ չենք գիտեր:

Նորութիւն շատ չը կայ: Հայոց պատմութեան հրատարակելու հրաման վերջապէս տրուեցաւ: Պ. Կարապաշեան հրատարակեց համառօտ Հայոց պատմութիւն մը ուր Հայաստան բառը գործածել ներքի եղած է—Օրմանեան կառավարութիւնն ազատամիտ լինելու հարկը կը զգայ: Խեղաթիւն է:

Գաւառներէն չարունակ տխուր լուրեր ունենք. երբ ասպատակութեանց լուրեր չեն, հրդեհի լուրեր են: Շապին-Գարա հիսարէն կը հաղորդեն թէ մեծ հրդեհ մը ծագելով շատ վնասներ տուած է Հայոց: Կարոց, երեղեցի, բազմաթիւ տուններ հայոց ամէն ինչ հոյժ հարակ եղած է: 1887 էն վեր այս երրորդ անգամն է. ով աշակցութիւն պիտի տայ անոնց:

Գաւառներու տեղական վեճերն աւելի զմեզ կը հետաքրքրեն քան նիւթական մեծ աղէտներն: Շարունակ առաջնորդներու խնդիրներուն ենք դիմադրած: Հազիւ Վանայ Պողոսի խնդիրը գրեթէ կարգի մտնելու նշան մը ցոյց կուտայ և անա խորհրդէն կը ծագի Պողոս վարդապետ մը խնդիր: Այդ վարդապետն որ շատ անարժեքի անձ մը չէ կը վայելէ Պատրիարքի հովանաւորութիւնը: Պատրիարքին մոլութիւն մը ունի, ուր որ անարժան եկեղեցական մը գտնէ անմիջապէս իւր փրկիլն ներքև կը պահպանէ: Պոլսոյ եկեղեցականները տեսնելով Պատրիարքի ջերմ պաշտպանութիւնն այդ Պողոս վարդապետին համար քանի որ դիտողութիւնները բրած են Սրբազանին, բայց նա պատասխանած է:

—Ինչ ընեմ, հօր է մարդ:

Այս բացականչութիւնը կրնէր Պատրիարքը նաև Պողոս եպիսկոպոսի խնդրին առթիւ:

Արդէն գրած եմ ժառանգական և ամուսնական դատի մը մասին Պատրիարքարանի և Եջիւ-Իւլիսլամի դատարանին միջև դժուարութիւնը մասամբ կարգադրվեցան: Եջիւ-Իւլիսլամի դատարանը կը ծանուցանէ Պատրիարքարանի թէ խօսադիւղի թաղ. խորհրդոյ վկայագրին նշանակութիւն չունի քանի որ ըստ Պատրիարքարանի առանձնաշարժմանց ամուսնական խնդիրներու մէջ Պատրիարքարանի տեղեկութիւնը միայն հիմք կրնան նկատուիլ դատարանաց կողմանէ:

«Արևելք» երէկ յօդուած մը հրատարակեց յորմէ կը տեսնուի թէ Պատրիարքարանն որչափ անխնամ կը թողու գաւառացիներն:

Մի քանի ամիս առաջ Պոլսոյ ասիական ափանց վրայ Հայտար Փաշայի երկաթուղէին դէպք մը պատահելով վեց հայ պանդուխտներ, երկաթուղայ ընկերութեան գործաւորը, սպաննուեցան: Այդ թշուառներու ընտանեաց պէտք է դարձան մը ընել, ամուսական կապել, սակայն Բնչպէս այդ խնդիրն իրենց պահանջն ընեն: Պատրիարքարանն պէտք է միջամտէ, իսկ նա անտարբեր կը կենայ:

Ահաւասիկ «Արևելք» գրածներն:

Հետեւեալ նամակաւ մեզ հաղորդուած անհասկանալի թերութեան վրայ կը հրաւիրենք Հայտարար-Փաշայի երկաթուղայն Տիսսեան խորհրդի ուղարկութիւնն: Ամեն քաղաքակրթութիւն մէջ ճանչուած մարդասիրութեան և հանրային պարտաճանաչութեան էական կէտ մ'է որ ընկերութիւն մը գրամական փոխարկութիւն մը կրնէ իւր գործին մէջ զոհաւորներուն ընտանեաց: Շատ ցաւալի բան մը կը լինի եթէ յայտ մասին ամեն քաղաքակրթութիւն երկրի օրինակն անտես ստեղծու չար յառաջ տանի զանցառութիւնն Հայտարար-Փաշայի երկաթուղայն Պատ. Տիսսեանութիւնը:

ՅԱՆԱՐԱՔԻ, 22 սեպտեմբերի

... Խմբագրապետ,

Յայտ է թէ Նիկոմիդեան երկաթուղայ վերջին արկածն սպանեց 6 պանդուխտ Հայեր, 1 Թուրք և 1 Թոյն: Կը լսենք թէ այս դժբաղդ գոհեր ընտանիքներն չեն ստացած ցարդ Բնչկերութեան կողմէ ու է դրամական փախարկութիւն, մինչ Եւրօպայի համամասն ընկերութիւնները կը նուիրեն մեծ գումարներ համամասն պարագայներին

մէջ: Այլ ով պիտի պաշտպանէ պանդուխտ իրաւունքն: Միթէ Պատրիարքարանը չէ կարող միջամտել, միթէ մամուլը չէ կարող հրաւեր կարգալ Հայտարար-Փաշայի ընկերութեան պարտաճանաչութեան:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բելգիայից հաղորդում են, որ Լիեթում սեպտեմբերի 14-ին տեղի ունեցան ցոյցեր յօդուք ընդհանուր ձայնատուութեան: Ներկայ էին մինչև վեց հազար բանւորներ:

—Երգրումից գրում են «Polit. Corresp.» լրագրին, «Հասարակաց ապահովութիւնը դեռ անհասանելի դրութեան մէջ է: Ահա ամբողջ ամիսներ են, որ մեծ ճանապարհները անանցնելի են դարձել քիւրդ առաջակային խմբերը: Այդ առաջակները փախցնում են քրիստոնեայ կանանց և աղջկաներին: Թիւրք իշխանութիւնը իրան թոյլ է զգում այդ բոլորի առաջ: Ազգաբնակչութիւնը, բացի այդ պատուհասից, նեղվում է առևտուրի ընկնելուց. եթէ այս բանը շարունակվի կարող է առաջ գալ անտեսական մեծ ճգնաժամ: Բայց եթէ անտեսական կողմից անշարժութիւն է նկատվում, միւս կողմից շատ կենդանի է պատերազմական աշխարհը: Մեծ եռանդով ամբողջուններ են կառուցանվում»:

—Ներկայումս գերմանական պատերազմական վարչութիւնը ամեն ջանք գործ է դնում զինաւորելու զօրքը նոր տեսակի հրացաններով: Պրուսիայի զինարաններում տիրապետում է տեսնալին գործունէութիւնը:

—Պայնել ուղարկեց Ամերիկայի իրանդական միութեան նախագահին մի գրութիւն, որի մէջ յայտնելով իր նախագծի մերժումը և կառավարութեան ձեռք առած խիստ միջոցները, հրաւիրում է շարունակել օգնել իրանդիային բարոյապէս և նիւթապէս:

—Բելգիայից հաղորդում են սեպտեմբերի 14-ից, որ այդ օրը Լիեթում բացվեցաւ կաթօլիկ-սոցիալական կոնգրէսը: Եպիսկոպոս Պոլսոյ մի ճառ խօսեց, մի շատ երկար ճառ, որի մէջ այն միտքն էր յայտնուած, որ եկեղեցուց դուրս փրկութիւն չը կայ: Նոյն մտքով էին խօսում և միւսները, որոնք մի և նոյն ժամանակ ցանկութիւն էին յայտնում բարոյքը բանւորների դրութիւնը: Բայց թէ ինչպէս պէտք է հասնել այդ նպատակին,—այդ մասին նորա լուծութիւն էին պահպանում: Ազատամիտ մամուլը պնդում է, որ այդ կոնգրէսի նպատակն է մեծացնել կղերի ազդեցութիւնը, և ուրիշ ոչինչ:

—Գնեւրալ կառավար ուղարկեց, ինչպէս իր ժամանակին հաղորդեցինք, Բոլգարիայի ռուսաց բոլոր գործակալներին մի չըջաբերական բաղկացած 12 յօդուածից: Երկրորդ յօդուածի մէջ ասված է. «Գաւառի խօսքերի և Ֆրանսիայի ժամանակը անցաւ. Կայսրը այնպիսի գործերի է սպասում, որով Բոլգարիան իր անկեղծ հաւատարմութիւնը արտայայտած լինէր»: Երրորդ յօդուածում ասված է. «Ռուսաստանը չէ ցանկանում և չէ ձգտում Բոլգարիայի կործանելուն, ընդհակառակը նա ցանկանում է այդ երկրի ծաղկելը»: Ու թէ երրորդ յօդուածում ասված է. «Ոչ իշխան Ալեքսանդր, ոչ նրա եղբայրը ոչ մի կերպով չեն կարող բարձրանալ Բոլգարական գահի վրա»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՍՅՅԻԱ, 29 սեպտեմբերի: Ժամի 9 1/2-ին, մի խումբ, որը բաղկացած էր մինչև 150 մարդուց, գնաց ռուսաց հիւպատոսարանը, բողբոջելու ընտրողական բիւրօի կազմակերպութեան դէմ: Հիւպատոսարանի կառավարիչը պ. Ներկիւլովը իրեցրեց եկողներին ընդհանուր կերպով գնեւրալ կառավարի միտալի բնաւորութիւնը: Այն ժամանակ ամբողջ խումբը ուղևորվեց դէպի ընտրողական բիւրօն, որը կազմված է քաղաքացիներից: Վուլչեվի նախագահութեամբ, այդտեղ եկողները յայտնեցին, որ եկել են արգելելու ընտրութիւնները, որի պատճառով և տեղի ունեցաւ սաստիկ կռիւ. եկողները իրանցից մի քանիսին մատնեցին, որից յետոյ նրանցից շատերին սկսեցին օտարակոխ անել հէնց իրանք ընկերները: Ապա ընտրողները սկսեցին հալածել բոլորին, և

փայտերով ու քարերով խոյուն քշեցին բոլորին և մաքրեցին կուռ տեղը: Այդ բանը տեսնել մի քանի բազմա: Ամբոխի խումբը երեք մասի բաժանվելով, տարաւ վերաւորվածներին ուստաց հիւպատոսա-րանը: Վերաւորվածները, որոնց մեծ մասը վէրք է ստացել զլիւն վրա, կը լինեն մինչև 56 հոգի: Ռուսաց զորավարական անդամները իրանց վրա վերցրին վերաւորվածներին հոգ տանելու պաշտօնը: Պ. Նիկիւլեով մտադիր է տեսնելու միւս պետութիւններին ներկայացուցիչներին հետ: Ընտրողական բերօն պաշտպանում է մի վաշտ զինուորային:

ԺՈՒՐԺԵՎՈ, 29 սեպտեմբերի: Գնեւրալ Կա-ուլարաւ այսօր առաւօտ Բուշուկից ուղևորվե-ցաւ Շումա և Վարնա, և կը վերադառնայ Բուշ-ուկ երեքշաբթի օր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 սեպտեմբերի: «Правит. Вѣст.» հաղորդում է, որ Աստորիայի և Բոմբեյի-այի սահմանների մօտ խօշորա երևացած տեղե-րից եկողներին բժշկական քննութեան ենթարկե-լու դիտարկութեամբ ձեռք առած միջոցների մանրամասնաբար վերաքննելու համար ուղարկ-վում են ներքին գործերի մինիստրութեան խորհրդի անդամ Գորգուլովին և բժիշկ Գորգուլովին: Սօֆիայից ստացած առաջին տեղեկութիւններից երևում է, որ ազգային մեծ ժողովի համար կա-տարվող ընտրութիւնները լինում են իբրև թէ յօգուտ կառավարչական թեկնածուներին: «Journal de St. Petersburg» նկատում է, որ այժմ դեռ դժուար է իմանալ ճշմարտութիւնը, հեռա-գիրներին անկողնամասի չը լինելու պատճառով: Յամբայի գէպը, ասում է լրագրիչը, աւելի հաս-կանալի է դառնում ուստաց կառավարութեան յայտնութիւնը, որ ինքն չէ ընդունում ոչ ներ-կայ հանգամանքներում կազմված ժողովը, և ոչ էլ այդ ժողովի վճիռները:

ՎԻԵՆՆԱ, 30 սեպտեմբերի: Երեկ երեկոյան այստեղ հասաւ լորդ Չերչիլը:

Կ. ՊՈԼԻՍ, 30 սեպտեմբերի: Բ. Գուռը համա-ձայնեց Սըր Ուայտին այստեղի բրիտանական ժամանակաւոր դեսպան նշանակելուն:

ՍՕՖԻԱ, 30 սեպտեմբերի: Ազգային մեծ ժողո-վի 590 պատգամաւորներից ընտրված են. 420 խնամակալութեան կողմնակիցներ, 20 Յանկովի կողմնակիցներ, և 50 հոգի էլ այնպիսիք, որոնց տրամադրութիւնը դեռ յայտնի չէ, չը գիտեն դեռ եւ, ընտրված է արեւելք կարավելով պատ-գամաւոր թէ ոչ: Ռուսաց զորավարական կա-ռավարիչը յանձնեց բազմաթիւ կառավարու-թեանը երեք յայտադիր. զբանցից առաջինի մէջ պ. Նիկիւլեով գնեւրալ Կաուլարայի յանձնարա-րութեամբ խիստ յանդիմանութիւն է յայտնում այն շրջաբերական յայտագրի ձևի և բովանդա-կութեան համար, որը վերաբերում էր ընտրու-թիւնների մէջ օտարներին խառնելը արգելե-լուն. ուստաց զորավարական երկրորդ յայտա-գրի մէջ յայտնվում է, որ սեպտեմբերի 28-ի ըն-տրութիւնները ապօրինի են և չունեն իր համար ոչինչ նշանակութիւն. երրորդ յայտագիրը պա-րունակում է մի խիստ բողոք, ամբողջ ուստաց հիւպատոսարանի վրա արած յարձակումների դէմ: Երեք յայտագրերն էլ հաղորդված են մեծ պե-տութիւնների ներկայացուցիչներին: Բազմաթիւ կառավարութիւնը մտադիր է ընդգրկմանը այդ յայտագրերի դէմ:

ՕԴԵՍՍԱ, 1 հոկտեմբերի: Ի նկատի ունենա-լով Եպիսկոպոսական և վարդապետական խօշորայի տարածվելը, Օդեսայի գնեւրալ-հանգապետը կարգադրեց կարանտինական միջոցները գործա-դրել այդ կողմերից եկողներին դէմ:

ԲՈՒԶՈՒԿ, 1 հոկտեմբերի: Կիրակի երեկո-յան մայր Ֆրիւզի այգեւորութիւն արեց բարօն Կաուլարային. գնեւրալը ցանկութիւն յայտնեց խօսակցելու սպանիին հետ, բայց կառավարչա-կան կարգադրութեամբ արգելված է սպանիին, հրաժարեցնելու սպանալիքով տեսնվելու Կա-ուլարայի հետ: Գնեւրալը տեսութեան գնաց օ-տար պետութիւնների հիւպատոսներին: Սօֆիա-յում, վարնայում և Ֆրիւզիայում հրատարակ-ված է, որ Ռուսաստանը չէ ընդունում եղած ընտրութիւնները:

ՇՈՒՄԼԱ, 1 հոկտեմբերի: Շումալայից տաս վերստ հեռու Կաուլարային դիմաւորեցին քաղա-քաղովը և Ռուսաստանի կուսակցիցները կողմից մի պատգամաւոր: Շումալայի քաղաքացիները պատկանում է կառավարչական կուսակցութեա-նը, բայց և այնպէս ողջունեց գնեւրալին: Քա-ղաք մտնելու ժամանակ, չը նայած յորդ անձրե-

ւին, բոլոր բնակիչները դիմաւորեցին Կաուլար-ային: Միաձայն «ուրան» վկայում էր, որ Շումա-յի բնակիչները իսկապէս հաւատարիմ են Ռու-սաստանին: Ժողովուրդը շրջապատեց գնեւրա-լին, որը, կառքի մէջ կանգնած լսեց Յանկովիստ-ների ուղերձը: Մինչդեռ բարօն Կաուլարա խօսում էր Ռուսաստանի և թագաւոր Կաւս-րի մասին, նրան ընդհատում էին ողևորված գո-չիւններով, բայց երբ խօսք եղաւ ընտրութիւն-ների մասին, լսվեցան բողոքներ: Գնեւրալ Կա-ուլարա ընդունեց Ռուսաստանի կողմնակիցնե-րի պատգամաւորութիւնը: Կառավարչական կու-սակցութեան պատգամաւորութիւնը պատրաստ-վում է յայտնելու Կաուլարային մի ուղերձով, որ կուսակցութիւնը հաւատում է Բազմաթիւ այժ-ման կառավարութեանը, և համոզված է, որ նա, այսինքն կառավարութիւնը, կը վերականգնեցի եղբայրական և միանգամայն որոշ յարաբերու-թիւններ Բազմաթիւի և Ռուսաստանի մէջ, և որ բազմաթիւն ժողովուրդը միշտ կը յիշի Ռուսաց Կաւսրի և ուստ ժողովրդի բարեբարութիւ-նը: Շումալայում 7,000 ընտրողներից 3,000-ը յետ կացան ընտրութիւններին մասնակցելուց:

ՎԱՐՆԱ, 1 հոկտեմբերի: Բարօն Կաուլարա այստեղ հասաւ երկուշաբթի երեկոյան: Երկա-թուղու կայարանում նրան դիմաւորեցին ցանկո-վիւնները և բազմաթիւ ամբողջ ողևորված կեր-պով ողջունեց: Բարօն Կաուլարային ուստաց հիւ-պատոսարանը գաղտնի յետոյ, ամբողջ մի ժամու-շափ խոնկում էր այդ տան մօտ, լսվում էին թշնամական բացականչութիւններ. բերդապետը հեռացրեց ամբողջ փողոցից: Կաուլարային ներ-կայացան պատգամաւորութիւններ երկու կու-սակցութիւնների կողմից. նա բացառեց պատ-գամաւորութիւններին ուստաց կառավարութեան պահանջները:

ԲՈՒԶՈՒԿ, 1 հոկտեմբերի: Գնեւրալ Կաու-լարա վարնայում սպասում է հրահանգների, ո-րոնցից կախված կը լինի նրա յետագայ գործու-նէութիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 հոկտեմբերի: «Journal de St. Petersburg» գտնում է որ առ այժմ անկարելի է կատարելապէս ճիշդ խորհրդածութիւններ ա-նել բազմաթիւն ազգային մեծ ժողովի ընտրու-թիւնների և Բազմաթիւի իսկական տրամադրու-թեան մասին: Սակայն, պարզ է, որ խնամակա-լութիւնը ընտրութիւնների ժամանակ յաղթու-թիւն արաւ ճշման և սարսափի միջոցով. նրանք, որոնք չէին կամենում ձայն տալ կառավարչա-կան թեկնածուներին, ջշկում էին քարերով և փայտերի հարուածներով: Զարմանալի չէ, որ Շումալայում 7,000 ընտրողներից 3,000-ը յետ կա-ցան ընտրութիւններից: Այդ ճշմանները չառ-լաւ արդարացնում են Ռուսաստանի խորհուրդ-ները ընտրութիւնների յետաձգութեան վերաբե-րութեամբ: Այժմ, Ռուսաստանը չի ընդունի, ինչպէս չառ անգամ յայտարարված է, ազգային մեծ ժողովը: ՎՃԻՆՆԱՅԻ մամուլը, ասում է յի-շեալ լրագրիչը, ստանալով սխալ տեղեկութիւններ Բազմաթիւայից, ինչպէս երևում է, տեղեկութիւն չունի այն սարսափների և խառնակութիւնների մասին, որոնք տեղի են ունեցել Սօֆիայում և միւս քաղաքներում, այլապէս «Fremdenblatt»-ը չէր գովաբանի խնամակալութեան հեղինակու-թիւնը, որը իբրև թէ պահպանել է խաղաղու-թիւն և կանոնաւորութիւն ընտրութիւնների ժա-մանակ:

Կ. ՊՈԼԻՍ, 1 հոկտեմբերի: Թիւրքական անկանոն է համարում Արեւելեան-Բոմբեյայի մասնակցու-թիւնը ազգային մեծ ժողովի ընտրութիւնների մէջ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 հոկտեմբերի: Այսօր տեղի ունեցաւ հրէաների սինագոգայի նոր շինութեան օրհնելու հանդէսը: Նախորդ օրը հանդիսաւոր կերպով տեղափոխվեցան տաս պատուիրաններ: Օրհնութեան հանդիսին ներկայ էին քաղաքապե-տը և քաղաքագլուխը: Բազմաթիւի Գրաքիլին մի ճառ խօսեց ուսերէն լեզուով:

ԲՈՒԶՈՒԿ, 2 հոկտեմբերի: Բարօն Կաուլարա հասաւ այստեղ արտակարգ գնացքով: Նա հրաժար-վեցաւ, ինչպէս երևում է, Արեւելեան-Բոմբեյի գնալուց, և հաւանական է, որ կը վերադառնայ Սօֆիա Տիրնօլայի վրայով. բայց դեռ մի քանի օր կը մնայ Բուշուկում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՈՍԱ Հոկտեմբերի 1-ին Ռուսաց 1 բուլը Լոնդոնի վրա արժէ 2313/16 պէնս:

—	—	Համբուրգի վրա	—	1941/4	պֆ.
—	—	Փարիզի վրա	—	2413/8	սան.
Ոսկի	—	արժէ	—	8	ր. 60 կ.
Մաքսային կուպոններ	—	—	—	169	3/4
Արծաթ	—	—	—	1	33
Բարսային դիսկոնտներ	—	—	—	41/4	60/0
Պետակ. բանկ. 50/0 տոմս	1-ին շրջանի	100	37	կ.	
—	—	2-րդ	100	25	
—	—	3-րդ	100	—	
—	—	4-րդ	99	87	
—	—	5-րդ	100	—	
Արեւելեան 50/0 փոխառութ. 1-ին շրջ.	—	99	62		
—	—	2-րդ	99	62	
—	—	3-րդ	99	62	
Ներքին 50/0 առաջին փոխառութ.	—	241	—		
—	—	երկրորդ	224	50	
51/20/0 բէնտա	—	104	75		
Ոսկեայ բէնտա	—	186	—		
Նոր կոնսոլիդաց փոխառութիւն.	—	159	50		
50/0 գրաւական թղթեր կալուած.	—	—	—		
—	—	161	—		
51/20/0 գրաւական թղթեր Խերսոնի կալուած. բանկի.	—	96	50		
60/0 գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	—	101	75		
—	—	Պոլտավայի	—	101	75

—	—	Պետ. Տօլակ.	—	101	25
—	—	Կիւնի.	—	102	—
—	—	Մօսկովայի	—	102	50
—	—	Բեսարաբ. Տավր.	—	101	—
—	—	Նիժ. Սամար.	—	101	—
—	—	Վիլնայի	—	100	25
—	—	Թիֆլիսի—27	և 43 տ.	—	—
—	—	Քուրսայի—18	և 43 տ.	—	—
Վ. օյթակո-կամակի բանկի ակցիաները	—	581	—	—	—
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	—	263	50	—	—
Իրէքիսկ-Վ. օյթակո ընկ.	—	97	—	—	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլի-գացիաներ.	—	94	87	—	—
Մօսկովայի քաղաք. օբլիգացիաներ.	—	95	62	—	—
Օդեսայի	—	94	—	—	—
Նոր երկաթուղային բէնտա	—	99	50	—	—
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	—	—	—	—	—
Պետական բանկի 6-դ հրատարա-կութեան տոմսերը	—	—	—	—	—
Ս. Պետերբուրգի քաղաքային տրամադրութիւնը յուղված է կուրսի ընկնելու պատճառով:	—	—	—	—	—

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԿՕՓԻ ՄՕԿԿՕ
Ս. ՍԻՈՒ 4 ԸՆԿ.
(II. 4907) 29—50 (2)

Կիրակի, 5 հոկտեմբերի, առաւօտեան 11 ժա-մին քաղաքային տան դահլիճում տեղի կունենայ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ-ԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՐ ԺՈՂՈՎ՝ 1885-ի եղմուաքի ընդհանուր հաշիւը քննելու համար:
1—1

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

երկուշաբթի, հոկտեմբերի 6-ին

Հայոց դրամատիական Ակումբի դերասանական խումբը Ամարային թատրոնում կը ներկայացնէ

I
ՔԻՆ

Դրամա 4 արարուածով և 5 պատկերով, հեղ. Գիւմայի, Թարգ. Աւարանի.

II

ՆԿԱՐԱՅՆԵՐ

Վ. օղբիլ 1 արարուածով Թարգ. Չմէկեանի.

Սկիզբն է 8 ժամին.

Ցումակները թէ վաղօրօք և թէ ներկայացման օրը, կարելի է ստանալ թատրոնի կա-սայում:
1—1

ՃՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵՒԵՒԵՒ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Զորեքշաբթի, հոկտեմբերի 8-ին, ՄԵՕՋ (MEUSE) շողենաւը, նաւապետ ԹԻԲԱԼ (THIBAL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյը: Տեղեկութիւնների մասին պէտք է զինել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէնօնին, նախկին Արծ-րունի գալընէում, № 103.

Խշնամութեան թոյլտւութեամբ, կիրակի, հոկտեմբերի 5-ին, 1886 թվ., ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ԱՅ-ԳԻՈՒՄ, Ս. Նիսայի դպրոցի օգտին, նշանակված է

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔ

Այգիում կը նուազեն երկու խումբ ԶՈՒՌՆԱ ԱՅՈՂՆԵՐ, երկու խումբ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՏՈՒՆԵՐ, և կը երգեն երկու խումբ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ԵՐԳԻՆԵՐ: Երեկոյան այգիում կը լինի չքեղ ճՐԱԳԱՆՈՑ և ՀՐԱԹԱՂՈՒԹԻՒՆ: Միջին և ներքին այգին կը փակվեն ցերեկվայ 3 ժամից: Մուտքը արժէ 20 կօպէկ: Երեկոյան կը վճարեն կէսը: Եթէ վատ եղանակ լինի, դրօսանքը կը յետաձգվի:
1—1

Մի վարժուհի, որ աւարտել է Թիֆլիսի Գայիանեան օր. դպրոցը, և երկու տարի ուսուցչուհի պաշտօն է վարել, ցանկանում է վարժուհու պաշտօն ունենալ Հայոց դպրոցներում: Պայմանների մասին զինել «Մշակի» խմբագրութեանը:
1—3

ԶԱՔԱԹԱԼԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑԻ Համար Հարկաւոր է ՌՈՒՍԱՑ ԼԵՋՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ, Հարաւթական 24 դաս. ՌՈՅԻԿԸ ՄԻՆՉԵԻ 500 ԲՈՒՐԻ, բնակարան և վառելիք:
1—2

Պատիւ ունեմ յայտնելու, որ ուսուրէնից հայերէն բառարանը օգոստոսի 10-ին յանձնվեցաւ տը-պարանին: Բաժանորդագրութիւնը շարունակվելու է մինչև մարտի մէկը: Ստորագրվել ցանկացող-ները թող բարեհաճին զինել Թիֆլիսի պ. Գ. Թալաթ Տիրանեանցին, Մոլդաւ Թալաթեանցին, Գրիգոր Դաւթադեանցին (ուսուցիչ) և Լիոն Մէլքե-Աղամեանցին: Բազում պ. Ալեքսանդր Միլիանեանցին (Աւետար. բանկում): Ալեքսանդր պ. Մկրտիչ Արաքսեանցին: Ա-րաքսեանց պ. Գ. Թալաթեանցին: Միակամ դպրոցների ուսուցիչները կարող են բաժանորդագրել (5 ռ.) վճարել ամսական մի մի րուբլի: Այսուհետեւ ինձ կարելի է զինել հե-տեւեալ հասցեով՝ Эривань Инспектору Армянской Духовной Семинарии Доктору Абесолому Иоаннисянцъ.
Արխողոմ Գովանիսեանց 7—10